ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 349-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Որոշման նախագիծը (այսուհետ՝ նախագիծ) համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նախագիծը չի համապատասխանում ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական այլ ակտերի դրույթներին: Այսպես՝ նախագծով հաստատվող հավելվածի 48-րդ ստուգաթերթից անհրաժեշտ է հանել «կազմակերպական-իրավական ձևը» բառերը՝ նկատի ունենալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի պահանջները:

3. Նախագծում իրավական այլ ակտերի նորմերի անհարկի կրկնություններ առկա չեն:

4. Իրավական ակտում համապատասխան լրացումներ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

5. Նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված են:

6. Նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

7. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծում «201» թիվն անհրաժեշտ է փոխարինել «2013» թվով:

8. Նախագիծն անհրաժեշտ է համապատասխանեցնել սույն եզրակացության 2-րդ և 7-րդ կետերին:

Իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ՝ **Կ. ԽՏՐՅԱՆ**